

# **Պիևոքիոյի արկածները . XV . Ավազակները հետապնդում են Պիևոքիոյի մինչև բռնելը, որից հետո կախում են Կաղնու ճյուղից**

Այդ ժամանակ բուրատիևն այնպես հուսահատվեց, որ քիչ մնաց փոշեր գետնին և հանձնվեր, բայց աչքերն այս ու այն կողմ գցելով, կանաչ ծառերի մեջ մի տուև տեսավ, որը հեռվում փայլում էր ճերմակ ձյան սման:

– Եթե ես այնքան ուժ ունենայի, որ կարողանայի հասնել այն տուևը, գուցե փրկվեի,– ասաց ինքն իրեն Պիևոքիոն:

Եվ առանց մի րոպե կորցնելու, նորից սկսեց վազել անտառի միջով արագ ու շնչակտուր: Ավազակներն էլ՝ անընդհատ հետևից ըսկած: Գրեթե երկու ժամվա հուսակտուր վազքից հետո, վերջապես բուևորովին շնչասպառ ևա հասավ այն տան դռանը ու ծեծեց:

Ոչ ոք չպատասխանեց:

Սկսեց ծեծել ավելի ուժգևորեն, որովհետև արդեն լսում էր հետապնդողների ոտքերի ձայնն ու հեթեթոցը:

Կրկին նույն լուևթյուևնը:

Տեսնելով, որ դուև ծեծելը ոչ մի օգուև չի բերում, ևա սկսեց հուսահատված գլիով ու քացով խփել: Այն ժամանակ լուսամուևի մոտ երևաց կապուևտ մազերով մի փոքրիկ ու գեղեցիկ աղջիկ: Նրա երեսն այնքան ճերմակ էր, կարծես թե մոմից լիներ: Աչքերը փակ էին, ձեռքերը կրծքին խաչած: ևա շուրթերն առանց շարժելու բարակ, հազիվ լսելի ձայնով, որը կարծես թե գետնի տակից էր դուևրս գալիս, ասաց.

– Այս տանը ոչ ոք չկա: Բուևորն էլ մեռած են:

– Այդ դեպքում գուև դո՛ւ բաց արա,– լաց լիևնելով ու աղերսական ձայնով գոռաց Պիևոքիոն:

– Ես էլ եմ մեռած:

– Մեռած, այդ դեպքում ի՞նչ գործ ունես լուսամուտի առաջ:

– Սպասում եմ դագաղի, որպեսզի գա ինձ տանի:

Դեռ խոսքը լրիվ չվերջացրած, փոքրիկ աղջիկն իսկույնս նեթ չքացավ, լուսամուտն էլ առանց աղմուկի նորից փակվեց:

– Օ՛հ, կապույտ մագերով փոքրիկ ու գեղեցիկ աղջիկ, – ձայն էր տալիս Պիևոքիոն, – բա՛ց արա, աղաչում եմ: Խղճա մի թշվառի, որին հետապնդում են ավազակ...

Բայց խոսքը վերջացնել էլ չկարողացավ, որովհետև կոկորդը բռնեցին ու միևնույնս սպառնալից ձայնով ասացին.

– Այլևս մեր ձեռքից չե՛ս պրծնի:

Բուրատինոն մահն աչքերի առաջ տեսնելով՝ սկսեց այնպես դողդողալ, որ լսվեցին փայտե ոտքերի հողերի շխկշխկոցն ու լեզվի տակ պահած այն չորս մետաղադրամի զնգզնգոցը:

– Հիմա ո՞նց ես, – հարցրին նրան ավազակները, – բերանդ բաց ես անո՞ւմ, թե չէ. ասա կամ՝ հա՛, կամ՝ չէ՛: Ահա՛, չե՞ս պատասխանում... Քո գործն է, այս անգամ արդեն մենք ինքներս բաց անել կտանք...

Եվ դուրս քաշելով երկու ածելիի պես սուր և հսկայական երկարության դանակ, խը՛ռթ... խրեցին Պիևոքիոյի փորը:

Բայց բարեբախտաբար բուրատինոն պատրաստված էր մի շատ ամուր փայտից, որի պատճառով դանակները ներս մտնելու փոխարեն հազար կտոր եղան, իսկ ավազակները մնացին դանակների կոթերը ձեռքներին՝ իրար երեսի նայելով:

– Իմացա՛հ, – ասաց այն ժամանակ նրանցից մեկը, – դրան պետք է կախել: Արի կախենք:

– Արի կախենք, – կրկնեց մյուսը:

Ասածն արած էր. Պիևոքիոյի ձեռքերը կապեցին հետևից, մի օղակ պատրաստեցին, անցկացրին օծիքը և կախեցին մի մեծ ծառի ճյուղից,

որը Կաղնի էր կոչվում:

Այնուհետև իրենք էլ նստեցին Կաղնու տակ, խոտերի վրա, սպասելով, մինչև որ բուրատիկոն կատարի իր վերջին ցնցումը: Բայց բուրատիկոն երեք ժամից հետո էլ դեռ ոչ աչքերն էր փակում, ոչ էլ բերանը բացում և, ընդհակառակը, ավելի շատ էր քացի-քացի անում, քան առաջ: Վերջապես, սպասելուց ձանձրացած, նրանք շուռ եկան դեպի Պիկոքիոն և կծու հեգնանքով ասացին.

– Մնաս բարով մինչև վաղը: Երբ վաղը վերադառնանք, կարելի է հուսալ, որ քեզ քաղաքավարի կերպով մեռած և բերանդ էլ բաց կգտնենք:

Ասացին ու հեռացան: Մինչդեռ այդ ժամանակ հյուսիսային մի ուժեղ քամի կատաղորեն ոռնում էր ու փչում, այս ու այն կողմ խփելով խեղճ կախվածին, որը այնպես էր ճոճվում, կարծես թե տոն օրերին զարկող զանգի լեզվակ լիներ: Ճոճվելը նրան սոսկալի ցավեր էր պատճառում, իսկ օձիքը գցած օղակը, անընդհատ ձգվելով, շուկն էր բուրդովին կտրում էր:

Կամաց-կամաց նրա աչքերը մթնում էին ու, թեև զգում էր մահվան մոտենալը, այնուամենայնիվ հուսով էր, թե մի խղճով մարդ կպատահի և օգնութուն ցույց կտա: Բայց երբ սպասեց, սպասեց ու տեսավ, որ ոչ ոք չի երևում, ուղղակի ո՛չ ոք, միտքն ընկավ իր խեղճ հայրը... և գրեթե մեռնելով, մրմնջաց.

– Ա՛խ, հայրիկ ջան, եթե դու այստեղ լինեիր...

Եվ այլևս ոչինչ ասել չկարողացավ: Աչքերը փակեց, բացեց բերանը, թուլացած կախ գցեց ոտքերը և, վերջին անգամ մի ցնցում անելուց հետո, սառեց մնաց իր տեղը:

[XVI. Կապույտ մագերով գեղեցիկ աղջիկն ազատել է տալիս բուրատիկոնին և, բերելով իր մոտ, պառկեցնում է անկողնում ու երեք բժիշկ կանչում, որպեսզի իմանա նրա մեռած կամ կենդանի լինելը](#)